ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 3/24-ՊԱ

ք. Երևան «10» մարտի 2024թ.

«Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկը (այսուհետ նաև՝ Հիմնարկ), ի դեմս տնօրենի պաշտոնակատար Գրիշա Հովհաննիսյանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու), ով գործում է Հիմնարկի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ քաղաքացի Մերի Հովսեփյանը (նույնականացման քարտ՝ 0106559522, տրված՝ 18.01.2019թ.-ին, 007-ի կողմից) (այսուհետ նաև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին ծառայությունների մատուցման սույն պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ ՀՀ կառավարության 2024թ. փետրվարի 1-ի N 172-Ն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով նախատեսված և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը վերապահված «1192. Կրթության որակի ապահովում» ծրագրի «11024. ՀՀ պետական դպրոցների՝ տեղակայված դպրոցների ԳՏՃՄ առարկաներ դասավանդող ուսուցիչների վերապատրաստում նոր ստանդարտներին համապատասխան» և «32007. ՀՀ պետական դպրոցների՝ ԳՏՃՄ լաբորատորիաներով ապահովում» միջոցառումների, ինչպես նաև «1236. Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի «32006. Հանրակրթական դպրոցների, մանկապարտեզների և կրթահամալիրների գույքով և տեխնիկայով ապահովում» միջոցառման շրջանակներում իրականացնել հետևյալ գործառույթները.

1.2.1. Աջակցում գնահատման հանձնաժողովին կենսաբանություն առարկայի գծով անցկացվող բոլոր մրցույթների շրջանակներում,

1.2.2. Ամփոփված մրցույթների շրջանակներում կնքված պայմանագրերով դպրոցներին մատակարվելիք լաբորատոր սարքավորումների տեխնիկական հատկորոշիչների համապատասխանության դիտարկում, ստուգում

1.2.3. Անհրաժեշտության դեպքում կարծիքների/եզրակացությունների տրամադրում,

1.2.4. Պատվիրատուի առաջադրանքների որակյալ և ժամանակին կատարման ապահովում,

1.2.5. Իրավասությունների շրջանակներում այլ համապատասխան գործողությունների իրականացում:

2. Ծառայությունների մատուցման կարգը

2.1. Ծառայությունների կատարման ժամկետի սկիզբ սահմանել «10» մարտի 2024թ.-ը:

2.2. Պայմանագիրը գործում է մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Կատարողը պարտավոր է՝

3.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

3.1.2. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով.

3.1.3. Անձամբ կատարել Ծառայությունները:

3.2. Պատվիրատուն պարտավոր է Ծառայությունների համար վճարել սույն պայմանգրի 4-րդ կետում նշված գնին համապատասխան:

3.3. Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

4. Պայմանագրի գինը և վարձատրությունը

4.1. Ծառայությունների մատուցման համար վճարը կատարվում է հետևյալ կարգով և ժամկետներում.

4.1.1. Կենսաբանություն առարկայի գծով անցկացվող բոլոր մրցույթների գնահատման արդյունքում ներկայացված հաշվետությունների և Պատվիրատուի կողմից դրանք ընդունելուց հետո 30 բանկային օրվա ընթացքում

Պատվիրատուն Խորհրդատուին վճարում է միանվագ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և այլ պարտադիր վճարները:

4.1.2. Ամփոփված մրցույթների շրջանակներում կնքված պայմանագրերով դպրոցներին մատակարվելիք լաբորատոր սարքավորումների տեխնիկական հատկորոշիչների համապատասխանության դիտարկման արդյունքում ներկայացված հաշվետությունների և Պատվիրատուի կողմից դրանք ընդունելուց հետո 30 բանկային օրվա ընթացքում Պատվիրատուն Խորհրդատուին վճարում է միանվագ 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և այլ պարտադիր վճարները:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներից են տարերային աղետները և պատերազմը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք առաջանում են Կողմերի կամքից անկախ և անհնարին են դարձնում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը:

5.2. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Կողմերը համաձայնվում և պարտավորվում են, որ Պայմանագրի կատարման և դադարեցման կապակցությամբ ծագող տարաձայնությունները և վեճերը ենթակա են լուծման փոխադարձ համաձայնությամբ, իսկ անհամաձայնության դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի կողմից:

7.2. Սույն պայմանագրով չկարգավորվող կողմերի հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	**Կատարող**
«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Վրացյան 73, ՀՎՀՀ՝ 02550991, Բանկ՝ ՀՀ գանձապետարան, Հ/Հ՝ 90011046670	Մերի Հովսեփյան նույնականացման քարտ՝ 0106559522, տրված՝ 18.01.2019թ.-ին, 007-ի կողմից, ՀԾՀ՝ 6407770223 Հաշվառման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հ. Ներսիսյան 2շ., 40բն., Բանկ՝ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ Հ/Հ՝ 2050452673381001
Տնօրենի պաշտոնակատար **Գ. Հովհաննիսյան**	**Մերի Հովսեփյան**
ստորագրություն	ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 1

2024թ. մարտի 10-ին կնքված թիվ 3/24–ՊԱ ծառայությունների մատուցման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան **«05» սեպտեմբերի 2024թ.**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս տնօրենի պաշտոնակատար Գրիշա Հովհաննիսյանի, մի կողմից, և ՀՀ քաղաքացի Մերի Հովսեփյանը (նույնականացման քարտ՝ 0106559522, տրված՝ 18.01.2019թ.-ին, 007-ի կողմից) (այսուհետ նաև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) 2024թ. մարտի 10-ին կնքված թիվ 3/24-ՊԱ պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) փոփոխություն կատարելու մասին.

1. «Պայմանագրի առարկա» բաժնի 1.2. կետը լրացնել հետևյալ նոր պարբերությամբ. «Այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026թթ. ծրագրի 4-րդ «Մարդկային կապիտալի զարգացում» գլխի 4.3 «Կրթություն» բաժնով հաստատված թիրախներից «մինչև 2026 թվականը առնվազն 300 դպրոցի և 500 մանկապարտեզ ու նախակրթարանների ապահովել ամբողջական հագեցմամբ անհրաժեշտ գույքով և սարքավորումներով և հանրապետության բոլոր 1400 դպրոցներում ստեղծել ժամանակակից բնագիտական և ինժեներական լաբորատորիաներ՝ էապես բարելավելով կրթության որակը» նախատեսված գործառույթների իրականացման ապահովման համար անհրաժեշտ գնման առարկաների ձեռքբերման գործընթացում (մասնավորապես՝ ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25-26/4 ծածկագրով գնման գործընթացներում) իրականացնել հետևյալ գործառույթները.»
2. Համապատասխանաբար լրացնել «Պայմանագրի գինը և վարձակալությունը» բաժնի 4.1.1 կետը հետևյալ պարբերությամբ. «Պայմանագրի 1.2. կետի 2-րդ պարբերությամբ սահմանված գործառույթների իրականացման, մրցույթների գնահատման արդյունքում ներկայացված հաշվետվությունների և Պատվիրատուի կողմից դրանք ընդունելուց հետո 30 բանկային օրվա ընթացքում Պատվիրատուն Խորհրդատուին վճարում է միանվագ 150.000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը այլ պարտադիր պահանջները»:
3. Պայմանագրի 4.1.2 կետը փոփոխել և այսուհետ ընթերցել հետևյալ կերպ. «Ամփոփված մրցույթների շրջանակներում 2024 թվականին կնքված պայմանագրերով դպրոցներին մատակարվելիք լաբորատոր սարքավորումների տեխնիկական հատկորոշիչների համապատասխանության դիտարկման արդյունքում ներկայացված հաշվետությունների և Պատվիրատուի կողմից դրանք ընդունելուց հետո 30 բանկային օրվա ընթացքում Պատվիրատուն Խորհրդատուին վճարում է միանվագ 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և այլ պարտադիր վճարները:
4. Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում 2024 թվականի սեպտեմբերի 5-ից և համարվում է 2024թ. մարտի 10-ին կնքված թիվ 3/24–ՊԱ ծառայությունների մատուցման պայմանագրում անբաժանելի մաս:
5. Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) օրինակից, 2 (երկու) էջից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:
6. Պայմանագրի մյուս կետերը մնում են անփոփոխ:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու

«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Վրացյան 73,
ՀՎՀՀ՝ 02550991,
Բանկ՝ ՀՀ գանձապետարան,
Հ/Հ՝ 90011046670

Տնօրենի պաշտոնակատար՝
Գ. Հովհաննիսյան

ստորագրություն

Կատարող

Մերի Հովսեփյան
նույնականացման քարտ՝ 0106559522,
տրված՝ 18.01.2019թ.-ին, 007-ի կողմից,
ՀԾՀ՝ 6407770223
Հաշվառման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հ. Ներսիսյան 2շ., 40բն.,
Բանկ՝ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050452673381001

Մերի Հովսեփյան

ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 2

2024թ. մարտի 10-ին կնքված թիվ 3/24–ՊԱ ծառայությունների մատուցման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան **«30» դեկտեմբերի 2024թ.**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս տնօրենի պաշտոնակատար Գրիշա Հովհաննիսյանի, մի կողմից, և ՀՀ քաղաքացի Մերի Հովսեփյանը (նույնականացման քարտ՝ 0106559522, տրված՝ 18.01.2019թ.-ին, 007-ի կողմից) (այսուհետ նաև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) 2024թ. մարտի 10-ին կնքված թիվ 3/24-ՊԱ պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) փոփոխություն կատարելու մասին.

1. «Ծառայությունների մատուցման կարգը» 2-րդ բաժնի 2.2. կետը փոփոխել և Պայմանգրի գործողության ժամկետը երկարաձգել՝ սահմանելով նոր ժամկետ, այն է՝ «Պայմանագիրը գործում է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը»:
2. Պայմանագրի 4.1.2 կետը փոփոխել և ավելացնել հետևյալ նոր պարբերությամբ. «Ամփոփված մրցույթների շրջանակներում մասնավորապես՝ թիվ ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25-26/4 ծածկագրով գնման գործընթացների արդյունքում կնքված պայմանագրերով դպրոցներին մատակարվելիք լաբորատոր սարքավորումների տեխնիկական հատկորոշիչների համապատասխանության դիտարկման արդյունքում ներկայացված հաշվետությունների և Պատվիրատուի կողմից դրանք ընդունելուց հետո 30 բանկային օրվա ընթացքում Պատվիրատուն Խորհրդատուին վճարում է միանվագ 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և այլ պարտադիր վճարները:
3. Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում 2024 թվականի դեկտեմբերի 30-ից և համարվում է 2024թ. մարտի 10-ին կնքված թիվ 3/24–ՊԱ ծառայությունների մատուցման պայմանագրում անբաժանելի մաս:
4. Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) օրինակից, 1 (մեկ) էջից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:
5. Պայմանագրի մյուս կետերը մնում են անփոփոխ:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կատարող**
«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Վրացյան 73, ՀՎՀՀ՝ 02550991, Բանկ՝ ՀՀ գանձապետարան, Հ/Հ՝ 90011046670 **Տնօրենի պաշտոնակատար՝** **Գ. Հովհաննիսյան** ստորագրություն	Մերի Հովսեփյան նույնականացման քարտ՝ 0106559522, տրված՝ 18.01.2019թ.-ին, 007-ի կողմից, ՀԾՀ՝ 6407770223 Հաշվառման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հ. Ներսիսյան 2շ., 40բն., Բանկ՝ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ Հ/Հ՝ 2050452673381001 **Մերի Հովսեփյան** ստորագրություն